

2444

Spindel

Handwritten text in a cursive script, likely a list or record. The text is written on a light blue background. The first line reads "Handwritten text 17-19 2007". The second line reads "Handwritten text 17-19 2007". The third line reads "Handwritten text 17-19 2007".

9(47)
6-99

1938

30 MAY 2011

Հ. Խ. Ս. Հ. ՌԻՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

№ 14 Հ Ե Ռ Ա Կ Ա Ռ Ի Ս Ո Ւ Ց Մ Ա Ն Գ Ր Ա Դ Ա Ր Ա Ն № 14

9(47)

24 JAN 2006

№ 6-99
Ա Կ Պ. ՅԵՓՐԵՄՈՎ

27

ՄՈՍԿՎԱՅԻ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ
17-ՐԴ ԴԱՐԻ ՍԿՋԲԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ
ՃԳՆԱԺԱՄԻ ՆԱԽՈՐՅԱԿԻՆ

4/812

Թարգմ. Մ. ԶԱՔԱՐՅԱՆ



Խմբագրելը՝ Հ. ԽՈՒՇՈՅԱՆ
Սրբագրելը՝ ԳԱՐ. ՀԱԿՈՒՅԱՆ

ՄՈՍԿՎԱՅԻ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ

17-րդ դարի սկզբի սոցիալական հզնաժամի
ն ա խ ու ռ յ ա կ ի ն

17-րդ դարի առաջին քառորդում վերջացավ ուղեւային (բաժնեկալվածային) իշխանությունների հավաքումը Մոսկվայի իշխանների կողմից: 1510 թվին Մոսկվային միացվեց Պսկովը, 1514 թվին՝ Սմոլենսկը, 1517 թվին՝ Ռյազանի իշխանությունը և 1526 թվին՝ վերջին իշխանությունները — Չերնիգովի և Հյուսիսային: Ռուսական հողերի հավաքումը Մոսկվայի իշխանության ներքո պրոգրեսիվ նշանակութուն ունեցող, փորովհետև կենտրոնացված պետության ստեղծումը, վերջին իր իշխանության տակ միացրել էր վերլիկոուսներով բնակեցված տերրիտորիան, ուղեւային-Ֆեոդալական մանրատվածության համեմատությամբ հանդիսանում էր խոշոր առաջադիմական քայլ: Պրոգրեսիվ նշանակութուն ունեցող Մոսկվայի իշխանների կողմը թաթարների դեմ, վերջ 1480 թվին ավարտվեց թաթարական լծի վոչնչացումով:

Գլավկիա 2238 հրատ. 14 պատվ. 4 տիրած 1000

Հանձնված է արտադրության 22 դեկտեմ. 1936 թ.
Ստորագրված է ապրիլ 7 հունվարի 1937 թ.
Ուսուցիչների փորակավորման ընտանիքում աղբյուրան,
Յերեան, Մարտի փողոց 13

ինքնապաշտպանութեան պահանջն արագացնում եր նաև կենտրոնացված պետութեան ստեղծումը:

16-րդ դարի յերկրորդ կեսից, Իվան Ահեղ ցարի ժամանակ բացվում է Մոսկվայի տերրիտորիալ նվաճումների մի ուրիշ շրջան. Իվան Ահեղը նվաճում է Միչին և Սաուրին Պովոլժյեն, 1552 թվին՝ Կազանի թագավորութունը, 1556 թվին՝ Աստրախանը: Աստրախանը նվաճելուց հետո փորձեր են արվում ներս մտնելու Կովկաս: Ահեղի թագավորութեան վերջում սկսվում է Սիբիրի նվաճումը: Այս բոլոր մարզերը բնակեցված էին արզեն վոչ թե վելիկոուսներով, այլ ուրիշ ազգութուններով՝ թաթարներով, մորզվերով, չերեմիսներով, բաշկիրներով և ուրիշներով: Այս ժամանակից սկսվեց պետութեան վերածումն ազգայինից բազմազգի պետութեան՝ հիմնված մի գերիշխան ազգի կողմից ուրիշ բոլոր ազգութունների կեղեքման վրա, սկսվեց Ռուսաստանի վերածումը «ժողովուրդների բանտի»: Նվաճված ազգութունները կատաղորեն գիմադրում էին կեղեքիչներին, նոր նվաճված մարզերում կառուցված ուստական քաղաքները մեկ անգամ չեն պաշարվել ապստամբների կողմից, սակայն այս ապստամբութունները դաժանաբար ճնշվում էին:

Բայց յեթե արևելքում Մոսկվայի պետութունն ընդհարվում եր թույլ ժողովուրդների հետ և իր սահմաններն ընդհարձակում եր ի հաշիվ նրանց նվաճման, ապա Արևմուտքում նա ստիպված եր բաղխվելու ավելի կուլտուրական և առաջավոր պետութունների հետ: Բալտիկ ծովի ափին տիրանալու համար մղված կռվում Մոսկվայի պետութունը պարտութուն է կրում:

Սկսած 15-րդ դարի վերջերից նա խաղաղ և վոչ խաղաղ հարաբերութունների մեջ է մտնում Արևմտյան Յեվրոպայի պետութունների, մերձավոր զրացի՝ Լեհ-Լիտվական պետութեան, Շվեդիայի, Դանիայի, Լիվոնյան որ-

դենի, Գերմանական կայսեր հետ և այլն: Այս ժամանակ առևտրական կապեր են հաստատվում հեռավոր Անգլիայի ու Հոլանդիայի հետ. 1553 թվին անգլիական նավերը յերևացին Հյուսիսային Դվինայի գետաբերանում և անգլիական վաճառականները յեկան Մոսկվա: Շուտով Դվինայի գետաբերանում անգլիացիների հետ տոնավաճառային առևտուր անելու համար կառուցվեց Արխանգելսկ քաղաքը, վորով հնարավորութուն ստեղծվեց առևտրական գործարքներ կատարելու ամբողջ Հյուսիսում: 1555 թվին անգլիական կառավարութունը Մոսկվայի պետութեան հետ առևտուր անելու համար կազմակերպեց հատուկ «Ռուսական ընկերութուն»:

Չարագոյող արտաքին առևտրի շահերը Ահեղի կառավարութեանը զրգում էին կռիվ մղել Բալտիկ ծովը դուրս գալու համար, վորն առևտրի շատ ավելի հարմարութուններ ուներ, քան Մալտակ ծովը: Բայց Բալտիկ ծովում գերիշխելու համար կռվում էին նաև ուրիշ պետութուններ, ուստի Մոսկվայի այնտեղ հիմնվելու ձգտումն իր դեմ հանեց Լեհաստանին և Շվեդիային: Լեհական Սիգիզմունդ 2-րդ Ոգոստոս թագավորը գրում եր անգլական թագուհի Յելեգավետային, ջանալով համոզել անգլիացիներին հետ կենալու Մոսկվայի հետ առևտրական հարաբերութուններ ունենալուց և նշելով այն վտանգը, վոր արևմտյան պետութունների համար բերում է ուսանելի ամրացումը Բալտիկ ծովում. «Մոսկվայի թագավորն որեցոր մեծացնում է իր հզորութունը ձեռք բերելով այն առարկաները, վոր բերվում են Նարվա, *) վորովհետև այստեղ են բերվում վոչ միայն ապրանք, այլև մինչև այժմ նրան անհայտ գինք. բերում են վոչ միայն արվեստից շինվածքներ, այլ և գալիս են իրենք արվեստագետները,

*) Նարվա—նավահանգստային քաղաք Ֆիննական ծոցի ափին, վոր ուսանելը նվաճել են Լիվոնյան կովի ամենասկզբին:

վորոնց միջոցով նա հնարներ և ձեռք բերում հաղթելու բոլորին: Մինչև այժմ մենք կարողանում եյինք հաղթել թշնամուն միայն այն պատճառով, վոր նա խորթ եր կրթվածությանը, արվեստներ չգիտեր: Իսկ յեթե Նարվայի նավագնացությունը շարունակվի, ապա ի՞նչը նրան անհայտ կմնա» *):

Այսպես Մոսկվայի գրացիները ձգտում յեին փակել Արևմուտքի այն նեղ դռնակն ել, վորպիսին հանդիսանում եր Նարվան. իսկ Մոսկվան ուզում եր ունենալ Արևմուտքի վրա լայն բացված դռներ:

1558 թվին Լիվոնիայի նվաճման համար Մոսկվայի պետության սկսած պատերազմն սկզբում հաջող եր Մոսկվայի համար: Լիվոնիան, վորը թուլանում եր յեկվոր Ֆեոդալ տերերի՝ գերմանացիների և տեղական հարստահարված բնակչության՝ լատիշների, լիվերի և եստերի միջև, շուտով ջախջախվեց Մոսկվայի զորքերի կողմից և քայքայվեց. նրա մի մասը տրվեց Լեհ-լիտվական պետությանը, իսկ մյուս մասը՝ Շվեդիային: Մոսկվայի պետության պատերազմը Լեհաստանի ու Շվեդիայի հետ վերջացավ կատարյալ անհաջողությամբ. լեհերն ու շվեդները վոչ միայն իրենց վերադարձրին առաջներում Ահեղի նըվաճած լիտվական հողերը, այլև, 1583 թվի հաշտությամբ Մոսկվան ստիպված եր զիջելու նաև Ֆիննական ծոցի ափերի ուսսական արմատական հողերը՝ Յամ, Կոպորյե, Իվան-գորոդ, Որեշեկ, Կորելու քաղաքները: Այսպիսով Մոսկվան խորապես կտրվեց Բալտիկ ծովից, իսկ «Յեկրոպայի վրա լուսամուտ» բանալու խնդիրը լուծեց միայն Պյոտր 1-ը:

*) Քաղվում է Սուլովյովի «Ռուսաստանի պատմությունը հնագույն ժամանակներից», 6-րդ հ., եջ 283.

Լիվոնյան պատերազմի անհաջողությունները սրեցին և արագացրին Մոսկվայի հասարակության զանազան դասակարգերի փոխհարաբերության մեջ վաղուց արդեն հասունացած ճգնաժամը: Մոսկվայի պետության մեջ խուլ պայքար եր տեղի ունենում մի կողմից արտոնյալ, հարուստ և մեծագարմ բոյարության միջև, վոր մեծ մասամբ կազմված եր նախկին ուղելային իշխանների սերունդներից՝ «իշխանիկներից», և մանր հողատերերի՝ ազնվականների միջև, վորոնց աջակցում եր վաճառականությունը: Մենք հիշում ենք, թե ինչ մեծ դեր խաղացին Մոսկվայի հին բոյարները Մոսկվան մեծացնելու մեջ, մասնավանդ, յերբ իշխաններն անչափահաս եյին, ինչպես որինակ Դմիտրի Դոնսկոյի ժամանակ: Ուղեիների վերացումով Մոսկվայի այս հին բոյարները՝ Մոսկվայի իշխանների վաղեմի ծառաները, հետին պլանի վրա մղվեցին Մոսկվա լցված նախկին ուղելային իշխանների սերունդների՝ իշխանիկների կողմից, վորոնք առաջին տեղերը զբաղեցին թե բոյարական դումայում, թե կենտրոնական կառավարման մեջ և թե «պրիկազներում» (ատյաններում). հենց նրանք ել կուսակալներ եյին ուղարկվում ամենախոշոր ու հարուստ մարզերը և արշավանքների ժամանակ ղեկավարում բանակներ: Բոյարության մեջ իշխանիկների գերակշռությունն արիստոկրատական բնույթ եր տալիս բոյարական միջավայրին, վորն ամուր կառչել եր պետության կառավարման իր արտոնություններին, գրանք համարելով իրեն պատկանող ըստ բնածին իրավունքի, ըստ «թագավորական ծննդաբանության»: Բոյարների արտոնյալ գրության նյութական հիմքն եյին հսկայական կալվածքները — «վոտչինաները» — վորտեղ զեռեա պահպանվում եյին նրանց նախկին ուղելային-ֆեոդոլական իրավունքները դա-

տելու, բնակչութիւնը հարկման յենթարկելու վերաբերմամբ և այլն: Բոյարական հողատերութիւնը մինչև 16-րդ դարի կեսերը, անշուշտ, գերակշռում էր հողատիրութեան մնացած բոլոր տեսակներին վոչ միայն քանակապես, այլև վորակապես: Հսկայական կազմաճիւղները պատկանում էին նմանապես հոգեվորականութեան բարձրագույն ներկայացուցիչներին ու վանքերին, վորոնք վոչ միայն վոչ մի հարկ չէին վճարում, այլև իրենց կազմաճիւղներին հաշվին զինվորական ծառայութեան ծախսեր չէին կրում: Վանքերն այն ժամանակ հանդիսանում էին վաշխառուական կապիտալի գլխավոր ներկայացուցիչները. վանական մենակյացները վարկային «արծաթով» ըստրկացնում էին գյուղացիներին, պարտքերի մեջ էին խճճում թե խոշոր հողատերերին՝ բոյարներին և թե մանր ծառայող մարդկանց: Նրանք նաև առևտուր էին անում. իրենց առևտրական ընդունակութիւններով առանձնապես աչքի էին ընկնում հեռավոր Սուրովիի վանքի մենակյացները, վորոնք տարեկան վաճառում էին մինչև 130 հազար փութ աղ:

Սոշոր վոտչինային հողատեր և պետութեան մեջ արտոնյալ դիրք գրավող բոյարներին դեմ թշնամաբար տրամադրված էին մանր հողատեր ազնվականները, վորոնք հող ունէին գլխավորապես պայմանական կազմաճիւղի (պոմեստյե) իրավունքով: Ազնվականութիւնն իր ծագումով չափազանց խայտաբղետ էր: Նրա կորիզն էին հանդիսանում «ազատ ծառաները», վորոնք ուղեւային-Ֆեոդալական շրջանում Մոսկվայի իշխանի արքունիքում զինվորական ծառայութիւն էին կատարում: Ուղեւային վոչնչացումով ըստ պայմանագրի ազատ ծառայութիւնը փոխարինվեց պետական պարտադիր ծառայութեամբ: Նախկին ուղեւային իշխանների և նրանց բոյարների ազատ ծառաները կամավոր կամ հարկադրաբար ծառայութեան էին փոխա-

դրվում Մոսկվայի իշխանի մոտ: Բացի այս ազատ մարդկանցից, նախկին ուղեւային իշխանների ու նրանց բոյարներին մոտ կային նաև զինվորական ծառայութեան համար պետանի անազատ ծառաներ (խոլոպներ), վորոնց հետ իշխաններն ու բոյարները գնում էին արշավանքներին. խաղաղ ժամանակ այս ծառաներն իշխանների ու բոյարների արքունիքներում կատարում էին զանազան անտեսական պարտականութիւններ:

15-րդ դարի կեսերից, յերբ ուղեւային վերացումը կատարվեց արագ տեմպով, Մոսկվայի կառավարութիւնն սկսեց կազմաճիւղներ հատկացնել այս պարտական ծառաներին, նրանց դարձնելով հողատեր ազնվականներ, վորոնք անմիջականորեն ծառայում էին ցարին: Անդրիացի գեսան Զլետչերը, վոր Մոսկվայում յեղել է 1588—1589 թվերին, այս բոլոր ծառայող մարդկանց թիվը հաշվում է մոտավորապես 100 հազար: Մանր կազմաճիւղների այս մոտավորապես 100 հազար: Մանր կազմաճիւղների այս մոտավորապես 100 հազար, վորը մի կերպ ապրում էր իր փոքրիկ կազմաճիւղներում, վոր աշակցութիւն էր ստանում միայն արշավանքների համար ցարից ստացած ուճիկով, չափազանց անձեռնտու դրութեան մեջ էր խոշոր վոտչինատեր բոյարների համեմատութեամբ:

Զգտելով զինվորական ծառայութեան համար կազրեք պահպանել, ցարական կառավարութիւնը հրատարակում է յերկու հրովարտակ, վորոնք լույս տեսան մեկը մյուսի յետեից 1557 թվի վերջին—1558 թվի սկզբին:

Այս հրովարտակներից մեկով դրամ վերցրած ծառայող մարդկանց թույլատրվում էր պարտքը տալ 5 տարվա մասնավճարումով և այն էլ միայն պարտք վերցրած փողը, առանց տոկոսների: Յեկող ժամանակների համար տոկոսն իջեցվում էր, և այն ժամանակվա համար սովորական 20 տոկոսի փոխարեն թույլատրվում էր վերցնել միայն 10 տոկոս: Տոկոսների վճարումից ազատվում էին

նաև առետրական մարզիկ, բայց արամեայդ մասնավճառումը նրանց վրա չիր տարածվում, նրանք պարտավոր ելին ամբողջ պարտքը վճարել միանգամից: Յերկրորդ հրովարտակը հնգամյա մասնավճարումը տարածում էր նաև այն հողատերերի վրա, վորանք իրենց հողերը գրավ ելին զրել տոկոսների փոխարեն: Քանի վոր այս գեպըում վաշխառուն ոգտվում էր գրավ դնողի հողից, ապա այսպիսի հողատերը վոչ մի հնարավորություն չունեք պարտքը վճարելու: Հրովարտակով սահմանված մասնավճարումը հնարավորություն էր տալիս վճարելու պարտքի մի հինգերորդ մասը, հողը վերստանալու իր արամադրության տակ և աստիճանաբար վճարելու պարտատիրոջը:

Յարական կառավարության կազմից իր շահերի համար ընդունված այս արտակարգ միջոցները ցույց ելին տալիս, թե ինչ դրության մեջ ելին գտնվում մանր հողատեր ազնվականները:

Ազնվականների գեղստությունը խորանում էր նաև նրանով, վոր նրանց վրա յեր ընկնում սազմական արշափանքների դիմավոր ծանրությունը: Ազնվականության այս գեղստության և ձգտումների արտահայտիչն է հանդիսանում այն ժամանակվա հրատարակախոսական մի քաջանչիի հիշատակարան՝ վոմն Իվան Պերեպետովի խընդրագիրը ցարին: Իվան Պերեպետովն այն ժամանակվա ամենակրթված մարդկանցից մեկն է, վորն արտահայտել է ազնվականության շահերը: Իր խնդրադրում Պերեպետովը շոշափում է այն ժամանակվա քաղաքական հիմնական հարցերը, ցարական իշխանության մասին, ցարի վերաբերմունքի մասին զեպի բոյարներն ու ազնվականները, պետական կառուցվածքի նոր պլանների մասին: Այն հիշատակարանի հիմնական բովանդակությունը հետևյալն է. ցարը պետք է կառավարի ինքնակալ կերպով, չխորհրդակցելով իշխանագուռներին հետ, իսկ յեթե իշխանա-

գուռները գնան ցարի դեմ, ապա նրանց պետք է դաժան պատիժների յենթարկել: Մարտիկներին, այսինքն ազնվականներին, ցարը պետք է «բարձրացնի և նրանց սրտերն ուրախացնի և իր պետական գանձարանից ուձիկն ավելացնի և նրանց թողնի իրեն մոտ գալու և ամեն ինչում հավատա և սիրի նրանց, իբրև իր յերեխաների հայր և առատաձեռն լինի նրանց հանդեպ, առատ ձեռքը յերբեք չի աղքատանա և ցարի փառքը կշատացնի, մարտիկների հանդեպ առատաձեռնության մեջ է ցարի խմտությունը»: Բոյարների մասին Պերեպետովը գրում է, թե «ուսական ցարի իշխանագուռներն իրենք հարստանում և ծուլանում են, իսկ նրա թագավորությունն աղքատացնում են, և նրա համար են նրանք կոչվում նրա ծառաները, վոր իրենց ամբողջ ունեցածով դուրս են գալիս նրան ծառայելու, իսկ քրիստոնեյական հավատին ամուր չեն կանգնած և մահացու թշնամու դեմ կատաղի խաղ չեն խաղում:»*)

Կանգ շառնելով այս հիշատակարանում շոշափված մյուս հարցերի վրա, մենք մեջ բերվածից արդեն կարող ենք տեսնել, վոր Պերեպետովը շափազանց բացասաբար էր վերաբերվում բոյարների անտեսական գորությանն ու նրանց քաղաքական արտոնություններին. նա պահանջում էր, վոր ցարը կառավարի ինքնակալ կերպով վոր նա շարդի բոյարների դիմադրությունը և ամեն կերպ բարձրացնի ու իրեն մոտեցնի ազնվականներին, բոյարության դեմ պայքարելիս հենվելով նրանց վրա:

Վոր բոյարության հետ կատաղի կռիվն անխուստիելի յեր, այն ցույց տվեց կոնֆլիկտների այն յերկար շրջթան, վորն առաջացավ Ահեղի նախորդներ՝ մեծ իշխաններ Իվան Յորդի և Վասիլիյ Յորդի թագավորության շրջանում: Իվան Ահեղի անչափահաս ժամանակ բոյարները միան-

*) Վ. Ռժիգա—Վի. Պերեպետով:

գամայն ինքնուրույն և իրենց քմահաճույքով եյին կառավարում պետութեանը և փորձում եյին շարունակել այս նաև այն ժամանակ, յերբ Ահեղը չափահաս դարձավ և թագադրվեց: Այս ժամանակ ցարը շուրջը կազմվեց նրա մերձավոր և մշտական խորհրդակիցներին մի խմբակ, այսպես կոչված «ընտրյալ ռազան»:

Չնայած «ռազայի» սկանալոր անդամներն այնպիսի մտքով եյին, ինչպես Նովգորոդի տերտեր Սիլվեստրը և ազնվական Ադաշը, նա հիմնականում արտահայտում էր ազնվազարմ բոյարութեան շահերը, վոր զլիսավորապես կազմված էր իշխանիկներից, վորոնք սկզբում ձգտելով պահպանել իրենց զերիշխանութեանը, վարոջ զիջումներ արին ազնվականութեանն ու վաճառականութեանը: «Ընտրյալ ռազայի» սկանալոր իշխանիկները համարվեցին մի սերտ շրջանակի մեջ և ապահովեցին իրենց արտոնյալ դրութեանն իբրև պետութեան կառավարողներին:

Կուրբսկուն*) ուղղած նամակի մեջ Ահեղը գանգատվում է, վոր տերտեր Սիլվեստրն ու նրա կողմնակիցներն սկսել են իրենց գաղանի խորհրդակցել պետական գործերի մասին, իսկ իրենց սկսել են «իշխանութեանը վերցնել», բոյարներին «հակաճարտ» տալով իր դեմ: Նրանք բաշխում եյին աստիճաններ ու կարվածքներ, սպորինի

*) Իշխան Կուրբսկի—ամենից ազնվազարմ բոյարներից մեկը, վոր լիվոնյան պատերազմի ժամանակ Մոսկվայի դորքերի հրամանատար լինելով, Նեվելի մոտ ճակատամարտը տանուլ տվեց լեհերին և փախավ Լեհաստան: Այնտեղից նա խիստ նամակ ուղարկեց Ահեղին, նրան կշտամբելով բոյարների հետ դաժան վարվելու համար: Ահեղը պատասխանեց, և այս նամակազրութեանն յերկար ընդհատումներով տեղեց տասնհինգ տարի: Կուրբսկին գրեց չորս նամակ, Ահեղը յերկու: Բացի սրանից, Կուրբսկին Լեհաստանում գրեց Ահեղի դեմ մեղադրական «Մոսկվայի մեծ իշխանի պատմութեանը», վորի մեջ արտահայտում էր բոյարութեան քաղաքական հայացքները:

կերպով իշխաններին վերադարձնում եյին Իվան Յորդի ժամանակ նրանցից բռնագրավված հողերը, ինքնակամ վճռում եյին բոյարական-իշխանական վտոջինանների տարացումը, վոր բազմիցս արգելված էր նախկին հրովարտակներով: Սրանով «ընտրյալ ռազան» իր կողմը գրավեց շատ նոր կողմնակիցներ, վորոնցով լցրեց պետութեան ամենից կարևոր բոլոր պոստերը: Նրանք նմանապես յուրացրեցին դումայում բոյարների տեղերի կարգը՝ այսինքն այս կամ այն բոյարի կառավարական նշանակութեան աստիճանը, սահմանելու իրավունքը: Կա այնպիսի կարծիք (պրոֆ. Սերգեյեվիչ), վոր «ընտրյալ ռազան» նույնիսկ 1550 թվի դատաստանագրքի մեջ մտցրեց ցարական իշխանութեան ձևական սահմանափակում, վորն արտահայտեց նրանով, վոր առանց բոլոր բոյարների վորոշման ցարը չէր կարող նոր որենքներ հրատարակել:

1553 թվին, յերբ Ահեղը լուրջ հիվանդացավ և կարելի չէր սպասել, վոր նա կմեռնի, իշխանիկները չէին ուզում յերզվել Գրոնզու փոքրահասակ վորդի Դմիտրիին, այլ նրա փոխարեն ուզում եյին նստեցնել իրենց մարդուն՝ նախկին ուղելային իշխանի վորդի Վլադիմիր Անդրեյեվիչ Ստարիցկուն: Յեթե իշխանիկներին այս բանը հաջողվեր, նրանք հասած կլինեյին իրենց նպատակին: Իշխան Վլադիմիր Ստարիցկու թեկնածութեան կողմնակից այս բոյարական-իշխանական կուսակցութեան զլուխ կանգնած եյին իշխաններ Իվան Շույսկին, Դմիտրի Կուլայատեր և ուրիշները: Նրանց հետ համամիտ եյին նաև տերտեր Սիլվեստրն ու Ադաշը:

«Ընտրյալ ռազայի» քաղաքականութեանը վարվում էր հոգուա իշխանիկ-բոյարների շահերի և չափազանց դժգոհութեան էր առաջացնում ազնվականութեան մեջ: Արգեն մեր հիշատակած Պերեսվետովը իր խնդրագրի մեջ խոսում է իշխանագունների մասին, վորոնք «թագավորու-

թյուն ունեն, ժողովրդին տանջել են իրենց անարգաթի
դատերով ու դավաճանությամբ և հարստացել են ժողո-
վրդական արցունքներից ու արյունից և իրենք ծուլացել
են և ցարին զոլեցրել են զորքից իրենց կախարդություն-
ներով ու հմայությամբ»։ Դժգոհություն առաջացրեց «ըն-
արյալ ոսպալի» նաև արտաքին քաղաքականությունը, վոր
ուղղված էր լիվոնյան պատերազմի դեմ, քանի վոր ազ-
նվականությունը հույս ուներ նախկին Լիվոնյան որդենի
հոգերը գրավելու ղեպքում կալվածային նոր հարկեր ըս-
տանալու։

Հիմնականում սրանք են այն պատճառները, վորոն-
ցով ազնվականությունն ամբողջովին պաշտպանում էր
Անեղին ցարական ինքնակալական իշխանության հաստատ-
ման համար բոյարների դեմ մղած նրա կռիվը։ Անեղի
այս կռիվը ֆեոդալների դեմ, անտարակույս, պրոպրետիվ
նշանակություն ուներ։ Ենդելյը, խոսելով Արևմուտքում
թագավորական իշխանության համանման կռիվ մասին
ֆեոդալների դեմ, գրում է հետևյալը. «Վոր այս ամբողջ
ընդհանրական խառնաշփոթության մեջ թագավորական իշ-
խանությունը պրոպրետիվ տարր էր,— այս միանգամայն
ակներև է։ Նա կարգի ներկայացուցիչն էր անկարգության
մեջ, կազմվող ազգի ներկայացուցիչն էր ի հակադրու-
թյուն խռովարար վաստակ պետությունների մանրատվե-
լու»*)։

Մի այլ ուժ, վոր պաշտպանում էր ազնվականությանը
բոյարների դեմ նրա մղած կռիվում, վաճառականությունն
էր։ Վաճառականները շահագրգռված էյին ուղեւրա—ֆեոդա-
լական կարգերի արագ վերացումով, վորոնք արգելակում
էյին ներքին առևտրի զարգացմանը, նրանք նմանապես շա-
հագրգռված էյին արտաքին հարձակողական քաղաքականու-

*) Հատված Թ. Ենդելյի չհրատարակված ձեռագրից։ Տես
«Ֆեոդալիզմի քայքայման և բուրժուազիայի զարգացման մասին»,
հայերեն էջ 11, հրատ. Ուսուց. վորակավորման ինստիտուտի։

թյամբ, մասնավորապես Բալտիկ ծովի ափերի նվաճու-
մով առևտուրն ընդհարձակելու համար Բոյարների քա-
ղաքականությունը խանգարում էր վաճառականության
այս ձգտումների իրականացմանը։ Ուղեւրա—ֆեոդալական
կարգերն ավելի ուժգնորեն էյին զգացնել տալիս իրենց
մասին, իսկ «ընտրյալ ոսպալի» քաղաքականությունը
ձգտում էր կասեցնել այս կարգերի վերացումը, պահպա-
նել իշխանական և բոյարական վտոջինանների կիսաֆեո-
դալական մեկուսացածությունը։ Բավական է ասել, վոր
1551 թվին Հարյուրգլխանի ժողովում զրվում էր և նույն-
իսկ դեռ չէր վճռված պետության ներսում մաքսային
սուրբերի վերացման հարցը։ Ինչ վերաբերում է արտաքին
քաղաքականության, ապա, ինչպես արդեն նշվեց, «ընտ-
րյալ ոսպան» դեմ էր լիվոնյան պատերազմին։

Ահա թե ինչու սխալ է Պոկրովսկու հայացքն «ընտ-
րյալ ոսպալի» վերաբերմամբ իբրև բոյարության և «պո-
ստոլիկների» (առևտրական մարդկանց) բլոկի*)։ Իր
գնահատությունը հիմնավորելու համար Պոկրովսկին մեջ
է բերում միայն այն փաստը, վոր տերտեր Սիլվեստրը,
բացի իր հոգևոր պարտականություններից, նաև հաջողու-
թյամբ առևտուր էր անում։ Ամենևին պարզ չէ, թե ին-
չու այս ղեպքում ուղրիչնիսայում (թիկնագործում) ըն-
դամենը միջանի տարի հետո վաճառականությունը բլոկի
մեջ է գտնվում արդեն վոչ թե բոյարների, այլ ազնվա-
կանների հետ։ Պոկրովսկին ջանում է այս բացատրել
նրանով, վոր «պոստոլիկների» ու բոյարության միտ-
թյունն ուղրիչնիսայում «ժամանակավորապես ջլատված»
էր, բայց միանգամայն պարզ է այսպիսի բացատրու-
թյան անհիմն լինելը։ Բնորոշ է, թե ինչպիսի Պոկրովսկին
ապացուցում ազնվականների ու վաճառականության

*) Տես Պոկրովսկի—«Ռուսաց պատմությունն հնագույն ժա-
մանակներից», 1-ին հ., էջ 224, 4-րդ հրատ.։

բլոկի առհասարակ անկարելիութիւնը: Նրա կարծիքով սրա պատճառը հանդիսացավ այն, վոր վաճառականները ցարական զանձարանին փող ելին վճարում իբրև զանազան հարկեր ու տուրքեր, իսկ ազնվականները զանձարանից փող ելին սա ա ն ու մ իբրև ոտձիկ: Վճարողներ և ստացողներ—անա, ըստ Պոկրովսկու, ազնվականների և վաճառականների միջև յեղած դասակարգային ներհակութիւնների հիմքը: Յեվ «հարկավոր եր շատ ժամանակ, հարկավոր ելին միանգամայն բացառիկ հանգամանքներ, վորպեսզի հնարավոր դառնար նրանց միութիւնը»,*) գրում եր նա: Պոկրովսկու այս, ինչպես և մյուս սխալների հիմքում ընկած ե գուհիկ «անտեսական» մատերիալիզմը և առևտրական կապիտալի նրա սխալ, հակամարքսիստական թեորիան:

Բացի ազնվականութիւնից ու վաճառականութիւնից ցարի կողմն եր հոգևորականութիւն զերակշռող, ամենից ազդեցիկ մասը, վորն ուներ այսպես կոչված «յոսիֆլյանական» ուղղութիւն, նրանց իդեոլոգ—վանքերից մեկի վանահայր Յուսիֆ Վոլոցկու անունով: Ազնվականութիւն հետ սերտորեն կապված հոգևորականութիւն այս մասը, ինչպես և ազնվականութիւնը, ձգտում ելին ամբասցնել ինքնակալութիւնը: Պարզ պատկերացնելու համար, թե այս տեսակետից ինչ նշանակութիւն ունեցավ հոգևորականութիւն աջակցութիւնը, անհրաժեշտ ե նկատի ունենալ, վոր այն ժամանակ հոգևոր անձինք ամենակրթված մարդիկն ելին և վոր հոգևոր իդեոլոգիան այն ժամանակ գերիշխող եր:

*) Ն ու յ ն տ ե ղ ու մ:

Բոյարութիւն հետ ցարի ու ազնվականների հարաբերութիւնների մեջ յերկար ժամանակ հասունացող ճշմարտամբ 1564 թվի վերջին բոլորվեց նրանց միջև առաջացած կարուկ խզումով և ուղրիչնայի հիմնումով: Մենք կանգ չենք առնի 1564 թվի զեկտեմբերի 3-ի հեղաշրջման դրամատիկական մանրամասնութիւնների վրա, վորով իր դործողութիւններն սկսեց ուղրիչնային: Ահեղը և նրա մերձավոր զինակիցներն իրենց նպատակ դրին վոչնչացնել ինչպես իշխանիկ—բոյարների քաղաքական նշանակութիւնը, վոր բղխում եր ուղերային-ֆեոդալական անցյալի արագ զիցլանքից, այնպես ել նրանց անտեսական հզորութիւնը, վոր հիմնված եր իշխանիկների հսկայական վոտչինային հողատիրութիւն վրա: Բայց անտեսական ու քաղաքական այս հեղաշրջումը պարուրված եր մի ձևի մեջ, վորը վերջով եր նույն ուղերային անցյալից: Իր նպատակների իրականացման համար Ահեղը հիմնեց հատուկ արքունիք — ուղրիչնայի — Մոսկվայի հին արքունիքից առանձին, վորը թողնված եր Բոյարական դումայի անորիւնութիւն ներքո: Ահեղի հատուկ արքունիքը կազմակերպված եր ցարի անհատական վոտչինայի տիպով, վորի մեջ ցարը, ինչպես և ամեն մի ուրիշ վոտչինավոր, կարող եր կարգադրութիւն անել, ինչպես վոր ուղեր: Սակայն ցարական անհատական վոտչինայի ֆեոդալական այս ձևի մեջ միանգամայն այլ բովանդակութիւն եր դրված: Իր հատուկ արքունիքի համար Ահեղը դատեց հազար հուսալի, իրեն նվիրված ազնվականներ՝ իրենց ծառաների հետ միասին, և նրանց ավերացրեց ստրելեցներին, վորոնք հանդիսանում եին այն ժամանակվա հետևազորը: Այս թիկնապետ անհրաժեշտ ուժ եր կազմում, վորի զեմ իշխանները չէին կարող մտածել անգամ կրու-

100
100

4074



վերու Հենված այս ուժի վրա՝ Ահեղը Չախճախեց՝ ուղե-
լային-Ֆետոպրական ազնվականությունը: Նրանց կալվածք-
ները բռնազրավեցին հողուտ սպրիչնինայի և բաշվեցին
ազնվականներին ու սպրիչնինայի անդամ «բոյարական
զավակներին»:

Բոյարության Չախճախման հետ միաժամանակ տեղի
յեր ունենում կողոպուտների ու բռնությունների որդիա
գյուղացիների վերաբերմամբ, վորոնց ստրկացումն սպրիչ-
նինայի հետևանքով ավելի ևս ուժեղացավ: Իրենց իսկ՝ իշ-
խանիկներին Ահեղը փոխադրեց ծայրագավառները, վոր-
տեղ նրանք հողեր ստացան կալվածային սեփականու-
թյան իրավունքով և դարձան շարքային ծառայող մար-
զիկ: Սրա հետ միասին տեղի յեր ունենում բոյարության
Ֆիդիկական վոչնչացում. հին իշխանական ցեղերից սեր-
վող շատ բոյարներ սպանվեցին, մյուսները վանականներ
դարձվեցին, յերրորդներն աքսորվեցին՝ նրանց գույքի բռ-
նազրավումով: Ահեղի թագավորության վերջում սպրիչ-
նինան բռնում եր պետության մոտ կեսը. մյուս կեսը
մնում եր Բոյարական գումայի կառավարման մեջ և կոչ-
վում եր «Չեմչչինա»:

«Հետոգհետե գոյացած սպրիչնինայի տերրիտորիան
16-րդ դարի 70-ական թվականներին կազմված եր պե-
տության կենտրոնական և հյուսիսային վայրերում գանը-
վող քաղաքներից և վորոտներից. Պոմորյեյում, Անդրմոս-
կովյան և Անգրոկյան քաղաքներում, Որոնեժի և Բեժեցկի
պլատինաներում: Հյուսիսում զեմ աննելով «մեծ ծով—
ովկիանոսին»՝ սպրիչնային հողերը ձեղբում մտնում եյին
«զեմչչինայի» մեջ, բաժանելով այն յերկու մասի: Արե-
վելքում զեմչչինային մնում եյին Պերմի և Վյատկայի
քաղաքները, Պոնիզովյեն և Ռյազանը, արեմուտքում՝ սան-
մանամերձ քաղաքները, «Փեքմանական Ուկրայինայից»
(Պսկովի և Նովգորոդի), «Լիտվական Ուկրայինայից» (Վե-

լիկյե Լուկի, Սմոլենսկ և ուրիշ.) և Սեվերսկի քաղաք-
ները: Հարտվում զեմչչինայի այս յերկու շերտերը կապ-
վում եյին ուկրայինական քաղաքներով և «վայրի դաշ-
տով»*):

Վերջիվերջո զեմչչինային մնում են պետության ծայ-
րամասերը: Իսկ կենտրոնական մարզերը, վորտեղ ամբողջ
բնեքով նստած եյին նախկին ուղելային իշխանների սե-
րունդները, վերցված եյին սպրիչնինայի մեջ: Սպրիչնի-
նայի մեջ եյին ստնված նաև կարևորագույն առևտրական
ճանապարհները Մոսկվայից զեպի պետության սահման-
ները՝ Սպիտակ ծովի ուղղությամբ (Վսլգա, Տոտա, Ուստ-
յուգ, Սորվիչեգոզսկ), Սովմոզորի և նոր քաղաք Արխան-
գելսկը) և Բալթիկ ծովի ուղղությամբ (Նովգորոդ-առև-
տրական կողմը, Մտարայա Ռուսսա և ուրիշ.): Սպրիչնի-
նայի ձեռքում կարևորագույն առևտրական ճանապարհնե-
րի կենտրոնացումը Ֆինանսական մեծ նշանակություն
ունեք, հակայական յեկամուտներ բերելով սպրիչնային՝
արքունիքի պահպանության և ազնվականներին ու սպրիչ-
նինայի մեջ վերցված բոյարական յերեխաններին ոտձիկ
ապուռ համար:

Սպրիչնինան հասավ արդյոք այն նպատակնորին, վոր
զնում եյին Ահեղը և նրա զինակիցները: Անտարակույս՝
հասավ: Այս մասին խոսում են թե ուրս ժամանակակից-
ները, ինչպես, արինակ, Կուրբսկին՝ Ահեղի հետ վարած իր
նամակագրության մեջ, թե ոտարերկրյա դիտողներ— առաջ
մեք հիշատակած Ֆլետչերը: Վերջինս գրում ե, վոր Ահե-
ղը, սպրիչնինան հիմնելով, գրավեց իշխանիկների ժառան-
գական հողերը, բացառությամբ շատ աննչան մասի, և իշ-
խանիկներին տվեց ուրիշ հողեր, վորոնց նրանք տիրում
են, քանի զեռ ցանկալի յե ցարին, այնքան հեռավոր

*) Պատոնով. «Սառնակ շրջանի պատմության ուրվագծեր»,
եջ 151:

մարզերում, վոր այնտեղ նրանք վոչ ժողովրդի սերն ունեն, վոչ ազգեցություն, վորովհետև նրանք այնտեղ չեն ծնվել և այնտեղ հայտնի չեն յեզբել: Այժմ ուղեւային իշխաններ կոչված բարձրագույն ազնվականությունը հավասարված է մյուսներին*):

Այսպիսով ուրիշինանս վերջ գրեց հին Փետրալական կարգերին և այս տեսակետից պրոգրեսիվ նշանակություն ունեցավ: Ահեղի և նրա ուրիշիկների տեւորն ու զաժանությունները չեն կարող խափոմնել այն տեղաշարժերը, վորոնք հանգիստացան ուրիշինայի արդյունք: Ահեղն ավարտեց իր նախահայրերի սկսած գործը, վերացվեցին Փետրալական հին ժամանակների մնացորդները, և պետության մեջ իշխանությունը բոյար-իշխանիկներից անցավ ազնվականության ձեռքը, վորին պաշտպանում էր վաճառականությունը:

Ուրիշինայի վերաբերմամբ անհրաժեշտ է վերլուծել նաև մի հարց, վոր տեսական և քաղաքական մեծ նշանակություն ունի: Յեա նկատի ունեմ Պոկրովսկու հայացքներն ուրիշինայի վերաբերյալ, վոր նա շարադրել է «Ռուսաց պատմություն» գրքի մեջ, ինչպես և անուղղակի կերպով հաստատել «Համառոտ ուրվագծում»: Այս հայացքների ելությունը հանգում է Պոկրովսկու հետևյալ ձևակերպման. «Մոշոր և միջակ հողատիրության սկսված կրոնում անտեսական բոլոր ոգուաները վերջինիս կողմն եյին: Յեվ հարուստ բոյարին-կալվածատիրոջը շահագործելով հողուտ մանրակալված ազնվականի՝ ուրիշինանս գնում էր բնական անտեսական զարգացման ճանապարհով, և վոչ թե նրա դեմ: Սրանումն էր նրա հաջողության առաջին պայմանը*): Ուրիշինայի այս գնահատությանը հակա-

*) Տւեաչեր. «Ռուսական պետության մասին», 9 գլ.:

**) Պոկրովսկի. «Ռուսաց պատմությունը հնագույն ժամանակներից», 1 հ., եջ 206, 4-րդ հրատ.:

սում են, նախ՝ արդեն առաջ հիշատակվող հրովարտակաները վաշխառության դեմ, վորոնց մասին Պոկրովսկին գրում է իր «Պատմության» 231-րդ եջում (միանգամայն պարզ է, վոր այս հրովարտականներն ուղղված էյին ի պաշտպանություն մանր հողատերերի, վորոնց առաջին հերթին սպառնում էր վաշխառուական կապիտալը), յերկրորդ՝ ավելի ուշ ժամանակների այսպիսի վավերագրեր, ինչպես 1601—1602 թվականների հրովարտակաները, վորոնցով խոշոր հողատերերին արգելվում էր գյուղացիներ ասնել մանր հողատերերից: Պարզ է, վոր յեթե մանր հողատերերի կողմը լինեյին անտեսական ոգուաները, ինչպես կարծում է Պոկրովսկին, ապա հարկ չեր լինի այսպիսի հրովարտականեր հրատարակելու: Ինքը՝ Պոկրովսկին, խոսելով ազնվական-կալվածատերերի ծանր գրության մասին և այն մասին, թե ինչպես կարելի յերնրանից դուրս գալ, «Պատմության» նույն 1-ին հատորում, բայց մյուս եջում գրում է. «կարելի յեր վորձել յերկու յելք: Մեկն այն էր, վոր վաղուց պնդում էր կալվածատիրական հրապարակախոսությունը: Քան թե փոխարինարար վերցնել վաշխառուներից, ավելի հեշտ էր ստանալ զանձարանից «Թագավորական ուժի» ձևով: Յերկրորդ յելքն այն էր, վոր իր ամայացած կալվածքը փոխարինվեր ուրիշ, կուսարեկապես կարգին կալվածքի հետ: «Իշխանիկների» վտոջինաները, նախկին ուղեւային իշխանների կալվածքները, վոր լեփ-լեցուն էյին տեղերում ամուր նստած «հնաբնակներով», ուր գյուղացիների թույլ շահագործումը, վոչ բարձր բնավճար կոռն առիթ չեյին առլիս գաղթելու, վաղուց պետք է գրավեյին ձկան նման սառցի վրա թալրացող վոչ-հարուստ կալվածատերերի ագահ հայացքները**):

Յեվ այսպես, վոչ մի հիմք չկա հաստատելու, վոր

*) Պոկրովսկի. «Ռուսաց պատմությունը հնագույն ժամանակներից», 1 հ., եջ 231—232:

անտեսապես բոլոր ոգուաները մտնը հողատիրութեան
կողմն ելին: Իսկ ինչո՞ւ յե Պոկրովսկին ձգտում ինչ էլ վոր
լինի ապացուցել այս, հակասութեան մեջ ընկնելով ինքն
իր հետ: Պոկրովսկու այս սխալը բղխում էր պատմութեան
նրա վոչ-դիտարեկտիւորեն ըմբռնելուց, «անտեսական» մա-
տերիալիզմի թեորիայից, վոր հանդիսանում էր նրա հա-
յացքների հիմքը: Այս թեորիան միակողմանի, վոչ-դիտ-
արեկտիւորեն է քննում անտեսական բազիսի և քաղաքա-
կան վերնաշենքի հարաբերակցութեանը, բացասելով վեր-
նաշենքի հակառակ ներգործութեանը բազիսի վրա: Այս
վոչ-մարքսիստական տեսակետից էլ ուլրիչնինան կարող
էր հաջողութեան ունենալ միայն այն դեպքում, յեթե նա
ընթանար բնական անտեսական գարգացման դժով, վորը
և ջանում է ապացուցել Պոկրովսկին:

4

Իհարկէ՛ շախշախիւած բոյարութեանը չէր կարող և
չէր պատրաստվում հաշտվելու իր պարտութեան հետ: Նա
սպասում էր նպաստավոր մոմենտի, վորպեսզի կրկին
իրեն վերագործնի նախկին դրութեանը և իշխանութեանն
իր ձեռքը վերցնի:

Բոյարների և ադնվականների կռիւն իշխանութեան
համար կազմում էր 16-րդ դարի վերջի մոսկովյան ուու-
սիայի սոցիալական հակասութեանների մի կողմը: Մյուս
կողմն էր հանդիսանում գյուղացիական պատերազմն ամ-
բողջ հողատիրական դասակարգի դեմ՝ թէ՛ բոյարների և
թէ՛ ադնվական-կալվածատերերի:

Այն շարունակին գուզընթաց, վոր կատարում էր
ուլրիչնինան, տեղի յեր ունենում մի այլ, անտեսանելի,
ներքին, ավելի խոր պրոցես, վորն արտահայտվում էր
գյուղացիութեան ֆեոդալական շահագործումն ուժեղաց-
նելու մեջ: Պետութեան տերրիտորիալ ընդարձակման կա-
պակցութեամբ այս հանգամանքը հանգում էր պետութեան
կենտրոնական մարզերից բնակչութեան հոսելուն դեպի

արևելյան և հարավային ծայրամասերը,— մի յերևույթ,
վոր պատմական գրականութեան մեջ ստացավ «կենտրո-
նի աղքատացում» անունը,

Ֆեոդալական շահագործման ուժեղացումը 16-րդ դա-
րի վերջին տեղի յեր ունենում վաշխառուական կապի-
տալի գարգացման ազդեցութեան տակ, վորի գլխավոր
ներկայացուցիչներն էին այն ժամանակ վանքերը: Վան-
քերի գործունէութեան այս կողմի վերաբերյալ ավելի
քան բավարար նյութեր տալիս են կանոնագրային հրո-
վարտակները, ինչպէս և այն ժամանակվա յեկեղեցական
գրականութեան յերկու ուղղութեանների բանավեճը՝ մի
կողմից «Նեստյաժատել»-ների միջև, վորոնք հանդես էլին
գալիս վանքերի հողային հարստացման դեմ և, մյուս կող-
մից՝ նրանց հակառակորդների՝ «յոսիֆլյանների» միջև:

Վանական մենակյացները մշակեցին մի ամբողջ սիս-
տեմ, ուղղված դեպի կրոնական նախապաշարմունքների
լավագույն շահագործումը: Ննջեցյալների հիշատակութեան
համար հատկացված գումարները, ձեռնադրվելու գումար-
ները (վանական ձեռնադրվածների ցման պահպանութեան
համար) և այն միացվում էին վոտչինաներ գնելու և
նրանց համար կառավարութեանից շնորհագրեր ազերսելով
ձեռք բերելու հետ: Այն հսկայական միջոցները, վոր այսպի-
սով հոսում էին դեպի վանքերն ավանդատուններից, հա-
րուստ վոտչինաններից և այն լայնածավալ առևտրից, վոր
կատարում էին վանքերը, վանական մենակյացները տոկոս-
ներով էլին տալիս գլխավորապէս իբրև վարկ իրենց գյու-
ղացիներին: «Նեստյաժատել»-ներից մեկը՝ Վասսիան Կո-
սոյը, «յոսիֆլյանների» հետ բանավիճելիս իր հակառա-
կորդներին կերպարանում է իբրև դաժան փոխատուներ,
վորոնք «վրադիր վրադրի վրա» էլին դնում, այսինքն՝
տոկոս տակոսի վրայ՝ աղքատ պարտապան գյուղացուց
խլում էլին կովը կամ ձին, իսկ իրեն կնոջ և յերեխանե-
րի հետ միասին քշում էլին իր հողից, կամ դատարան-

ներով հասցնում վերջնական քայքայման: Վաշխառու-
թյան այս մեղադրանքն առաջադրված էր նաև հարյուր-
գլխանի ժողովում, վորտեղ վորոշում էր հանված, վոր-
պեսզի «յեպիսկոպոսներն ու վանքերը փող և հաց տան
իրենց գյուղերի գյուղացիներին առանց տոկոսի, վորպիս-
զի գյուղացիք ապրեն նրանց հետ կապված, նրանցից
չփախչեն և նրանց գյուղերը չամայանան»: Այս վորոշումը,
իհարկե, մնաց թղթի վրա:

Թե ինչ նշանակութուն ունեն վարկը, այս յերևում
է նրանից, վոր սակավ էր վորևե գյուղացի բնակվում յե-
կեղեցական կամ կալվածատիրական հողի վրա առանց
հողատիրոջից վարկ ստանալու. վարկ ստանալով՝ գյուղա-
ցին պետք է տոկոսների զիմաց աշխատեր սիրով համար:
Կիրիլո-Ֆելոգյորյան վանքում գյուղացիների 70 տոկոսն
իր հողը ցանում էր վանական սերմացվով, այսինքն
հնարավորություն չունեն իր դաշտերը ցանելու առանց
հողատիրոջ վարկի:

Բայց միայն վանքերը չէ, վոր ստրկացնում էյին գյու-
ղացիներին վարկերով. առավել կամ պակաս հաջողությամբ
սրանով զբաղվում էյին հողատերերի նաև այլ կատեգո-
րիաներ: Մանր հողատերերն իրենք էյին խրվում պարտ-
քերի մեջ, վորպեսզի փող ունենան վարկային «արծաթի»
համար, քանի վոր միայն այս ճանապարհով էր ապահով-
ված գյուղացիների հաստատ ստրկացումը: Գյուղացիների
ստրկական կախման ուժեղացումն արտահայտվում էր
նրանով, վոր բահրային իբրև հավելում մտցվում էր կողը՝
հողատիրոջ համար աշխատելը, վոր զնալով ավելի ու
ավելի յեր մեծանում: Գյուղացիների գրությունը բնորո-
շող բազմաթիվ հիշատակարաններից կարելի յե մեջ բե-
րել Սուրվեցիի վանքի 1561 թվին վերաբերող կանոնա-
գրային հրովարտակը՝ ուղղված Պուզիրյով գյուղի գյուղա-

ցիներին*): Այս հրովարտակից յերևում է, վոր գյուղա-
ցիք պարտավոր էյին բահրա վճարել վանքին հացով, պան-
րով, ձվով. նրանք պարտավոր էյին նաև վանքի համար հող
վարել, հաճարն ու ածիկը կալսել կվաս պատրաստելու համար,
փայտ և տաշեղ կրել, «բեռ կրեր» գետի Վարդգա (վանքը
լայնածավալ ամառուր էր անում) և Մոսկվա ու Բե-
լո-ոգերո, «խիկ յեթե պատահի, վոր գյուղացիք վորևե
տարի բեռ չկրեն, ապա նրանցից փող վերցնել»: Գյուղա-
ցիք նմանապես պարտավոր էյին կարգի բերել վանքի
բակն ու կալը, իսկ յերբ շենքերը խախտտանան, հների
փոխարեն նոր ապարանքներ շինել, կառավարչին լսել
բոլոր բաներում և վանքի՝ գործով «զնալ արևածագին,
՛խիկ ով ժամանակին չզա, նրանից՝ հրաման» (տուգանք)
և յեթե հին գյուղացիներից մեկն ունի «դաշտերում մա-
ցառուտներ, նրանք այս մացառուտները պահպանեն և
առանց կառավարչի թույլատրության չկարեն»): սրա
խախտման համար նմանապես տուգանք էր վճարվում:
Գյուղացիների նկատմամբ դատ էյին անում վանական
կառավարիչները, վորոնք սրա համար տուրք պիտի վերց-
նեն: Վորդու կամ դատեր հարսանիքի գեպքում կառա-
վարչին պետք է ընծա տային փողով կամ մթերքով:

Այսպես՝ ամեն կողմից կաշկանդված էր գյուղացու
տնտեսական և անձնական կյանքը: Չեականորեն գյուղա-
ցին իրավունք ունեն մի հողատիրոջից անցնել մյուսին,
բայց փաստորեն անցումն անկարելի յեր դառնում մինչև
հեռանալը՝ հողատիրոջ հետ հաշիվները մաքրելու անհրա-
ժեշտության հետևանքով: Այս պատճառով իրականում
անցումն այլանդակվում և դառնում էր գյուղացու «կան-
չում» ուրիշ հողատիրոջ կողմից՝ նրա փոխարեն վճարե-
լով բոլոր պարտքերը. սրանից գյուղացու գրությունն ըստ

*) «Գյուղացիների պատմության հիշատակարաններ՝ Ն.
Կյոչկովի հրատարակությամբ», № 22:

էյության փոխնով չեր փոխվում: Գյուղացիութեան մի մասը, այսպես կոչված՝ «հնաբնակները», վոր գրանցված էյին ցանկամատյաններում, արդեն 16-րդ դարում ձեռ- կանորեն զրկված էր անցման իրավունքից:

Գյուղացիների ծանր դրութեան, այն չափից դուրս շահագործման մասին, վորին յենթարկվում էյին նրանք, և հողատերերի կամայականութեան մասին վկայում են նաև ոտարերկրյա գիտողները: Այսպես, որինակ՝ Հերբերշտայնը, վոր յերկու անգամ յեկել է Մոսկվա Վասիլիյ 3-րդի ժա- մանակ և լավ ծանոթացել Մոսկվայի կարգերի հետ, զրում, և վոր այստեղ գյուղացիք իրենց տերերի համար աշխատում են շարժվա մեջ 6 որ, վոր ամենախղճալի գրութեան մեջ են նրանք, իսկ գույքը չի պաշտպանված ազնվագարմ և նույնիսկ շարքային ծառայող մարդկանց կամայականութեանից:

Գյուղացու համար միայն մի յեղք էր մնում՝ լքել իր անասութեանը և հեռանալ պարաքը չվճարած: Հենց սրան էլ դիմում էյին շատ գյուղացիներ: Հեռացման հնարավո- րութեանն այն ժամանակ գյուրանում էր Մոսկվայի գրնված հսկայական հողերի պատճառով: Միջին և Ներ- քին Պովոլժեյի նվաճումը և Մոսկվայի պետութեան սահ- մանների ընդարձակումն Ոկայից դեպի հարավ հեռացող- ների համար բացում էյին արևելքի ու հարավի նոր սե- վանողներում ազատորեն բնակվելու հեռանկարները: Հե- ոանում էյին վոչ միայն այն գյուղացիք, վորոնք ապրել էյին մասնավոր տերերի հողերում, այլև, այսպես կոչված՝ «սև» կամ պետական հողերի գյուղացիները, յերբ այդ հողերն ընկնում էյին ծառայող մարդկանց ձեռքը: Շատ մեծ էր բնակչութեան հոսանքը պետութեան կենտրոնական մարզերից: Մուրոմի արվարձանում 8 տարվա ընթացքում (1566-ից մինչ 1574 թիվը) 587 անասութեանից մնաց միայն 111-ը: 1588 թվին Մոսկվա յեկած անգլիացի Ծլետ-

չերը գրում է, վոր Վոլոգդայից Մոսկվա ճանապարհին հանդիպել է գյուղերի, վորոնց խրճիթները ճանապարհի յերկու կողմից ձգվում էյին մի վերստ, բայց առանց մի հատիկ մարգու: Վարելահողը մնում էր խոպան կամ ան- տառապատվում էր: Հին վայրերում մնացած գյուղացիք կրճատում էյին իրենց վարելահողերը. բարինի վարը կըր- ձատվում էր գյուղացիների պահապանութեան պատճառով և մշակվում խոլոպների միջոցով: Գյուղացիների մի մասի դեպի հարավ հեռանալու հետևանքով ե՛լ ավելի մեծանում էր ամեն տեսակ պարհակների ու հարկերի ծանրութեանը, վորոնք ընկնում էյին մնացողների վրա: Հեռացող գյու- ղացիների հետևից շարժվում էյին նաև ազնվականները, վորոնց կառավարութեանը կալվածներ էր տալիս նոր նվաճված հողերում: Գյուղացիներն ստիպված էյին ավելի հեռու գնալ դեպի հարավ, տափաստանները և այնտեղ հիմնել իրենց կայանները, ապրելով տափաստանային քոչ- վորների հարձակման մշտական սպառնալիքի տակ:

Այսպես, հարավ գնացող փախստակ գյուղացիներից ու խոլոպներից կազմվում էյին կազակային շոկառներ: Այս բոլոր անապաստան մարդիկ, վորոնց համար ատելի յեր գոյութեան ունեցող հասարակարգը, վոչ կեղեքել էր իրենց, հույներով էյին ապրում և սպասում նպաստա- վոր մոմենտի՝ վտաքի յեղնելու համար:

Բայց վոչ միայն գյուղացիներն էյին դժգոհ, վորոնց մի մասը միանգամայն քայքայվում էր և ստիպված էր հեռանալու պետութեան սահմաններից, այլև դժգոհ էյին նաև բնակչութեան ուրիշ զատակարգեր. դժգոհ էր և վըր- դովված բոյարութեանը, վորին ջախջախել էր ուրբիհնի- նան. դժգոհ էյին ազնվականները զինվորական ծառայու- թեան ծանրութեանից ու բանվորական ձեռքերը նրանցից հեռանալու հետևանքներից: Ամբողջ պետութեան մեջ զգացվում էր մի խուլ խմորում, իբրև սոցիալական խոր ճգնաժամի նախագուշակ:

ժամանակակիցների կողմից «Սառնակ ժամանակ» անվանված այս ձգնաժամն եր հենց, Վոր պայթից 17-րդ դարի սկզբին: Այս «Սառնակ ժամանակի» իրազարձությունների բարդ հյուսվածքի մեջ հենց ամենասկզբից հայտնապես յերևան են զալիս յերկու հիմնական զիծ, Վորոնք բնորոշում են «Սառնակության» սոցիալական բովանդակությունը. կռիվ բոյարների ու ազնվականների միջև իշխանության համար և գյուղացիական պատերազմ՝ ամբողջ հողատիրական դասակարգի զեմ: «Սառնակության» ընթացքում նա բարդանում է նոր մոմենտով՝ հարևան ստարերկրյա պետությունների—Շվեդիայի և առանձնապես Լեհաստանի ինտերվենցիայով, Վորի կառավարող դասակարգերը ձգտում են ոգտագործել «Սառնակությունը», նպատակ ունենալով նվաճել Մոսկվայի պետությունը և Վոլհապցներ նրա ազգային անկախությունը:

Յերկրի ներսի դասակարգային պայքարում և յերկրի անկախության համար մղված ազգային կռվում հաղթող են հանդիսանում ազնվականները և նրանց աջակցող փաճառականությունը: Այս դասակարգերն ել իրենց շահերի համար ոգտագործում են «Սառնակության» արդյունքները, Վորի կոնկրետ ընթացքն ու հետևանքներն ինքնուրույն հողվածի նյութ են:

«Երբա կրասով», № 5, 1936 թ., մայիս:



« Ազգային գրադարան



NL0415188

